

ՀՀ ԿԳՄՄՆ «Սևանի Խ.Աբովյանի անվան  
ավագ դպրոց» ՊՈԱԿ



## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա -- « ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ»

Կատարող -- ՆԱԻՐԱ ՄԻՐԱՔՅԱՆ

Ղեկավար -- ՆԵԼԼԻ ՔԱՐԱՄՅԱՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն -----	1--2 էջ
Կենսաբազմազանության պահպանություն-----	3--10 էջ
Եզրակացություն -----	11--12 էջ
Օգտագործված գրականություն -----	13 էջ



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՆՏԱՌՆԵՐԸ ՆԱԽՈՐԴԵԼ ԵՆ ՄԱՐԴՈՒՆ ,

ԻՄԿ ՆՐԱ ՀԵՏԵՎԻՑ ԳԱԼԻՍ ԵՆ ԱՆԱՊԱՏՆԵՐԸ :

Կենսաբազմազանությունը կամ գենետիկ բազմազանությունը դա տեսակների՝ կենդանի օրգանիզմների և էկոհամակարգերի բազմազանությունն է : Ըստ գիտնականների երկրագնդի վրա կենսատեսակների թիվը կազմում է 5-ից 30 մլն : Այսպիսի լայն միջակայքը պայմանավորված է նրանով, որ ներկայումս ստորակարգ բույսերի և անողնաշարավոր կենդանիների թիվը ճշտված չէ : Ավելի հաճախ ընդունվում է, որ կենսատեսակների թիվը երկրագնդի վրա կազմում է 10 մլն : Հենց այդ թվաքանակն էլ մենք կնդունենք որպես հիմք :

Որոշ կենդանատեսակներ ժամանակի ընդացքում ոչնչանում են, մյուսները՝ ծագում, բայց այդ գործընթացը շատ դանդաղ է ընթանում, որ առաջին հայացքից նույնիսկ թվում է, թե ոչինչ չի փոխվում : Երկրի վրա գոյություն ունեցող կենսատեսակները ապրում են համակեցության մեջ, որը գտնվում է դինամիկ հավասարակշռության մեջ : Համակեցության մեջ յուրաքանչյուր կենդանի տեսակ ունի իր կենսաբանական խորշը, իր բնորոշ ֆունկցիան : Բայց բավական է, որ որևէ տարածքում հայտնվի մարդը իր շահերով, իր նպատակներով ու խնդիրներով և ամեն ինչ կարող է խախտվել :

Մեր նախնիները, որոնք զբաղվում էին որսով և պտուղներ հավաքելով, արդեն այդ ժամանակ իրենց ապրելավայրերում բնաջնջում էին խոշոր կենդանիներ և թռչունների տեսակներ, որոնք իրենց համար ծառայում էին որպես սնունդ :

Սակայն այս գործընթացը չէր կարող նշանակալից ազդեցություն գործել համերկրային շրջակա միջավայրի վրա, քանի որ մարդիկ գործում էին հիմնականում իրենց մկանների ուժով և նրանց թիվը մեծ չէր և, երբ նրանք որևէ վայրում որսի կենդանիներին ոչնչացնելուց հետո տեղափոխվում էին մի այլ վայր, հավասարակշռությունը արագությամբ վերականգնվում էր :

Ներկայումս կենսատեսակների կորստյան պատճառ կարող են լինել

© տեսակների ապրելավայրի քայքայումը,

© գյուղատնտեսության կողմից բնական ռեսուրսների գերշահագործումը,

© շրջակա միջավայրի աղտոտումը,

© որսագողությունը,

© բույսերի և կենդանիների նոր տեսակների ներմուծումը բնիկ տեսակների ապրելավայր :

Արդյոք մարդը ոչնչացնելով կենսատեսակները չի սպառնում իր իսկ գոյությունը :



## ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրագնդի լանդշաֆտային թաղանթը՝ որպես համամոլորակային գեոհամակարգ հանդիսանում է հասարակության կենսագործունեության և արտադրության տարածքային կազմակերպման միջավայրը, որի լանդշաֆտ-էկոլոգիական առանձնահատկությունների հաշվառումը, բնառեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը մարդկության առաջնահերթ հիմնահարցերից մեկն է: Բնօգտագործման անհաշվենկատ քայլերը բնական միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտման երկրահամալիրների կառուցվածքի ու գոյաձևի արմատական փոփոխության, և, վերջապես, կենսաբանական բազմազանության նվազման լուրջ սպառնալիք են ստեղծում: Այս պայմաններում բնօգտագործման ու բնապահպանության խնդիրները ստանում են որակական նոր բովանդակություն և կառուցողական նոր ուղղվածություն հիմնված բնաանթրոպոգեն տարածքային համալիրների արդյունավետ պլանավորման ու օպտիմալ կառավարման սկզբունքների վրա:

Թեև մարդկային տարաբնույթ գործունեության հետևանքներն անխուսափելիորեն արտացոլվում են բնության բոլոր բաղադրիչներում, վերափոխող ազդեցությունն ուղղված է լանդշաֆտային թաղանթի կառուցվածքային մասերի՝ բնատարածքային համալիրների վրա, որոնց զարգացման ֆիզիկաաշխարհագրական համալիր պայմաններն են որոշում ինչպես անթրոպոգեն գործոնի ներգործության բնույթն ու տնտեսական օգտագործման ուղղվածությունը, այնպես էլ վերջինիս նկատմամբ դրանց կայունության աստիճանը: Հետևաբար բնական ռեսուրսների հաշվենկատ օգտագործումը, պահպանումն ու վերարտադրումը որպես արդյունավետ բնօգտագործման և բնապահպանության գիտապրակտիկ հուսալի միջոց, հնարավոր չէ իրականացնել առանց բնատարածքային համալիրների զարգացման տարածաժամանակային օրնաչափությունները բացահայտելու, անթրոպոգեն ներգործության նկատմամբ դրանց էկոլոգիական տարողության ու կայունության աստիճանը պարզելու և գնահատելու:

Բնատարածքային համալիրների ձևավորման ու զարգացման գործում իրենց ուրույն դերն ու նշանակությունն ունեն լանդշաֆտի կենսածին բաղադրիչները, բույսերն ու կենդանիները: Բնության կենսածին տարրերն իրենց կենսագործունեությամբ ամնիջական մասնակցությունն ունեն լանդշաֆտում ընթացող կենսաբանական ու կենսաքիմիական բարդ պրոցեսներում և ապահովում են լանդշաֆտի մյուս բաղադրիչների միջև ֆունկցիոնալ- դինամիկ կապերը: Հարմարված լինելով միջավայրի էկոլոգիական որոշակի պայմանների և միժամանակ կրելով այդ պայմանների ազդեցությունը, լանդշաֆտի

կենսաբաղադրիչներն արտացոլում են միջավայրի ֆիզիկաաշխարհագրական ողջ իրադրությունը և, որպես երկրահամակարգիչների տեղեկություն հաղորդող միջոց բնատարածքային համալիրների լանդշաֆտա-էկոլոգիական վիճակի գնահատման ուրույն ցուցիչ են հանդիսանում: Դրա հետ մեկտեղ կենսածին բաղադրիչներն անթրոպոգեն ներգործությանը ենթարկող լանդշաֆտի առավել զգայուն տարրերն են և այն տեղամասերում որտեղ բնական միջավայրը որոշակիորեն պահպանված է դրանք իրոք ցուցչային դեր են կատարում, արտահայտում են բնական համալիրներին բնորոշ առանձնահատկությունները: Հաշվի չառնելով այս ամենը, մարդն իր ոչ խելամիտ գործունեությամբ մեծ վնաս է հասցնում լանդշաֆտի կենսածին բաղադրիչներին, բուսակենդանական օրգանիզմներին ու դրանց համակեցություններին: Բնական միջավայրի հետ իր փոխհարաբերությունների հիմքում ունենալով սեփական կենսապայմանների բարելավման ձգտումը մարդու պատմական զարգացման ընթացքում էապես ազդել է կենսաբազմազանության վրա: Շատ հաճախ դրա արդյունքը եղել է կենսաբազմազանության աղքատացումը, էկոհամակարգի կայունության թուլացումն ու դեգրադացիան:

Երկիր մոլորակի կենսաբազմազանության նվազումը էկոլոգիական հիմնախնդիրներից մեկն է: Երկրագնդի կենսաբազմազանությունը հանդիսանում է ինչպես մարդու գոյության, այնպես էլ մարդկային քաղաքակրթության առաջադիմությունն ապահովող անհրաժեշտ պայման: Այն անգնահատելի և անփոխարինելի ռեսուրս է թե ներկա, և թե ապագա սերունդների համար: Կենսաբազմազանությունը միաժամանակ պարտադիր պայման է էկոհամակարգի գոյության համար: Կենսաբազմազանության արժեքը նախ և առաջ պայմանավորվում է նրանով, որ կենսաբազմազանությունը էկոհամակարգերի կայունությունը պահպանող հիմնական գործոնն է: Որքան հարուստ է կենսաբազմազանությունը, այնքան ավելի մեծ է էկոհամակարգերի

դիմադրողականությունը արտաքին ներգործության նկատմամբ:

Կենսաբազմազանությունը էկոլոգիական զարգացման հիմնական գործոններից է, դրա շնորհիվ է պահպանվում կյանքի անընդհատությունն ու հարատևությունը:

Կենսաբազմազանությունը հանդիսանում է գենոֆոնդի հարուստ շտեմարան: Կենդանի օրգանիզմների ամեն մի տեսակ օժտված է բազմաթիվ ժառանգական հատկանիշներով, որոնցով հարստացնում է ընդհանուր գենոֆոնդը, իսկ գենոֆոնդը, ինչպես հայտնի է շտեմարան է բույսերի նոր տեսակներ և կենդանիների նոր ցեղեր ստանալու համար: Մեծ է նաև կենսաբազմազանության միջավայրաստեղծ և սոցիալ-տնտեսական նշանակությունը:

Կենսաբազմազանության շնորհիվ է, որ երկրագնդի բուսակենդանական աշխարհը հանդես է գալիս, որպես արժեքավոր բնական ռեսուրս՝ մարդկանց

մատակարարելով բազմազան սնունդ, իսկ արդյունաբերությանը տարբեր տեսակի արժեքավոր հումք: Եվ վերջապես. կենսաբազմազանությունը տեղեկատվության անգնահատելի աղբյուր է էկոհամակարգերի և դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչների կառուցվածքի և հատկությունների մասին:

Մեր օրերում կենսաբազմազանությունը հետզհետե վերածվում է կենսահամակեցությունների և էկոհամակարգերի վիճակի ու միջավայրի էկոլոգիական բարեկեցության գնահատման ցուցչային առաջնահերթ գործոնի, որը դիտարկվում է երեք մակարդակներով.

1. ծագումնաբանական /օրգանիզմների գեներում պարունակող տեղեկատվության ողջ ծավալը /,
2. տեսակային / կենդանի օրգանիզմների տեսակների թվաքանակը /,
3. էկոհամակարգային / բիոտիկ համակեցությունների և դրանց միջավայրի տարրերի ամբողջությունը /:

Այս մակարդակները ժամանակի ու տարածության մեջ փոխկապված և փոխալայմանավորված են, ուստի, համամիտ ենք որոշ գիտնականների հետ, ովքեր առաջարկում են «կենսաբազմազանություն» հասկացությունը փոխարինել «կենսաաշխարհագրական» կամ «կենսաէկոլոգիական» բազմազանություն հասկացություններով՝ դրանցով իսկ շեշտելով կենսաձևերի հարստությունը պայմանավորող բիոտոպի, այն է օրգանիզմների բնակության միջավայրի լանդշաֆտա-էկոլոգիական պայմանների բազմազանությունը:

Որպես էկոլոգիական պայմանների արգասիք, լանդշաֆտի կենսաձին տարրերը լանդշաֆտագոյացնող մյուս բաղադրիչների նման ավելի բազմազան կենսաձևերով են ներկայացված լեռնային երկրներում: Մակերևույթի ձևաբանական բարձրաչափական ու ձևաչափական առանձնահատկությունները, երկրաբանատեկտոնական բարդ կառուցվածքը, հողակլիմայական պայմանների բազմազանությունը նպաստել են լեռներում կենսահամակարգերի մեծ բազմազանությանն ու խայտաբղետությանը:

Կենսաբազմազանության պահպանման անհրաժեշտությունը կարելի է բացատրել երեք պատճառներով:

1. Առաջին խումբը բարոյագիտական և գեղագիտական է:

Երկրի վրա ապրող բոլոր կենդանի էակները բարոյական տեսանկյունից մարդու հետ հավասար ապրելու և գոյատևելու իրավունք ունեն: Այս առումով մարդը կրում է վիթխարի, անսահման պատասխանատվություն: Ոչ մի գիշատիչ իր գոհի պոպուլյացիան լրիվ չի ոչնչացնում, քանի որ դա իր կործանման

պատճառը կդառնա, մինչդեռ մարդու գործունեությունը ոչնչացնում է կենդանի օրգանիզմների բազմաթիվ տեսակներ: Տեսակի ոչնչացումը անդառնալի գործընթաց է:

2. Պատճառների երկրորդ խումբը տնտեսական է:

Կենսատեսակները մարդուն հազցնում և կերակրում են, էներգիայի աղբյուր են, հումք, դեղամիջոցներ, շինանյութ:

Աշխարհում որպես սննդամթերքի աղբյուր օգտագործվում են հիմնականում մոտ հարյուր տեսակի բույսեր: Դրանք հիրավի, անգին ռեսուրս են, և դրանց զենեոիկական բազմազանությունը պետք է պահպանել և բազմապատկել:

Դրա հետ մեկտեղ նաև հազարավոր բույսեր, որոնք կարելի է դասել «ուտելի» կատեգորիային և ավելի ակտիվ օգտագործվող սննդամթերքի արտադրության համար: Դրանց հատկություններն ուսումնասիրելուց հետո կարելի է նույնիսկ բուծել արհեստական ճանապարհով: Սակայն հնուց ի վեր մենք չարդարացված կերպով կենտրոնացել ենք հիմնականում մի քանի տասնյակ ամենաճանաչված մթերային մշակաբույսերի վրա և մյուս տեսակները կարող ենք կորցնել՝ առանց նույնիսկ ինչպես հարկն է ուսումնասիրելու:

Բույսերը և կենդանիները բնական բիոքիմիական ֆաբրիկաներ են: Դեղերի արտադրությունը մոլորակի բնակչության ավել քան 60 տոկոսի համար անմիջականորեն կապված է կենդանի օրգանիզմների, հատկապես բույսերի հետ:

Կենսատեսակները դեղանյութեր ստանալու համար ունեն երկակի կիրառություն.

© օգտագործվում են անմիջականորեն դեղեր ստանալու համար,

© քիմիկոսներին և բժիշկներին հուշում են սինթետիկ դեղամիջոցների բաղադրությունը և կառուցվածքը:

Չինաստանում բժշկական նպատակով օգտագործում են երկրի 30000 բուսատեսակներից ավելի քան 5000-ը:

Մեզանում այսօր օգտագործվող դեղանյութերի վիթխարի մեծամասնությունը ի հայտ է եկել կենդանի օրգանիզմներում գոյություն ունեցող բնական նյութերի հետազոտման շնորհիվ: Մարդուն հայտնի բույսերի հարյուր հազարավոր տեսակներից լրիվ ուսումնասիրված է համեմատաբար փոքր մասը: Կարելի է ենթադրել, որ չուսումնասիրված տեսակները ևս կարող են պարունակել գիտության անհայտ օրգանական միացություններ, որոնք կարելի է օգտագործել բուժական նպատակով:



Ոչ մի քիմիկոս, չունենալով բնական օրինակը, չի կարող սինթեզել այնպիսի քարդ կենսաբանական ակտիվությամբ օժտված մոլեկուլներ, ինչպիսիք ստեղծել է բնությունը:

3. Կենսաբազմազանության պահպանման անհրաժեշտության պատճառների երրորդ խումբը կապված է Էկոհամակարգերի կարգավորիչ դերի հետ, մասնավորապես բուսական աշխարհի մի շարք կարևորագույն ֆունկցիաների հետ: Դրանք են ջրաբաշխումը, միկրոկլիմայի կարգավորումը, օդի մաքրության պահպանումը, աղտոտող նյութերի կլանումը, հողային ծածկույթի կազմավորումն ու պահպանումը: Էկոհամակարգերի գործունեության հետ է կապված նաև արևի էներգիայի օգտագործումը քիմիական միացություններ ստանալու համար, որոնք անհրաժեշտ են բոլոր կենդանի օրգանիզմների, ներառյալ մարդու կյանքի և գործունեության համար:

Հաշվի առնելով այդ ամենը՝ հեշտ է հասկանալ, թե ինչու են մեծագույն դեղագործական ընկերությունները ընդարձակում իրենց այն հետազոտական ծրագրերը, որոնք ուղղված են նոր, օգտակար հատկություններ ունեցող բնական միջոցներ որոնելուն:

Լեռնային երկրներին բնորոշ կենսաաշխարհագրական օրինաչափություններն ու կենսաէկոլոգիական պայմանների բազմազանությունը հատուկ են նաև Հայաստանի Հանրապետության բնատարածքին, որն առանձնանում է կոհամակարգերի բացառիկ հարստությամբ: առանձնանում է կոհամակարգերի բացառիկ հարստությամբ:

Հայաստանի Հանրապետության լանդշաֆտաաշխարհագրական դիրքը, ռելիեֆի ձևաբանական և ձևաչափական առանձնահատկությունները, ջրաջերմային և հողաաշխարհագրական պայմանները նպաստել են հարուստ կենսաբազմազանության ձևավորմանը: Հանրապետության համեմատաբար փոքր տարածքում հայտնաբերված են բարձրակարգ ծաղկավոր բույսերի շուրջ 3600 տեսակ, ավելի քան 17500 կենդանատեսակներ, որոնցից մոտ 500-ը՝ ողնաշարավորներ: Ցանկացած բույսերի և միկրոօրգանիզմների քանակն անցնում է մի քանի տասնյակ հազարից: Հայաստանը հարուստ է նաև տնտեսական արժեք ներկայացնող տեսակներով. բույսերի շուրջ 2000 տեսակ օժտված է սննդարար, կերային, դեղատու, ներկատու, էթերայուղատու, խեժատու, իսկ մի շարք կենդանիներ՝ մորթատու, մսատու և այլ հատկություններով:

ՀՀ բուսականությունն ու կենդանական աշխարհը բնական մյուս բաղադրիչների նման ունեն վերընթաց գոտրական բաշխվածություն: Վերընթաց գոտիների ստորին ենթահարկերը ներկայացնում են ցածրլեռնային, անապատա-կիսաանապատային, իսկ վերին ենթահարկերը՝ ենթալպյան ու արլպյան

կենսաձևերը: Դրանց միջև տարածվում են տափաստանային, անտառային և

մարգագետնային կենսահամակեցությունները: Լանդշաֆտաստեղծ բաղադրիչների ապարակագմության, ռելիեֆի ձևաչափական տարրերի, կլիմայական պայմանների և հողային ծածկույթի առանձնահատկությունների հետ կապված կենսածին

բաղադրիչները վերընթաց գոտիական ընդհանուր ֆոնի վրա հանդես են բերում նաև ներլանդշաֆտային զգալի տարբերություններ:

Հանրահայտ է, որ լեռնային երկրներում լանդշաֆտային համալիրների վերընթաց գոտիական հորինվածքի ստորին հարկն իր վրա է կրում լայնակի գոնայի կնիքը: Այստեղից էլ հետևում է լեռնային երկրի լանդշաֆտաաշխարհագրական դիրքի՝ գոնալ պատկանելության, որպես կենսաբանական բազմազանության գործոնի նշանակությունը: Այս առումով ՀՀ տարածքը՝ կախված չոր մերձարևադարձային լայնություններում զբաղեցրած դիրքից, ունի լանդշաֆտային գոտիականության յուրօրինակ սպեկտոր և դասվում է չոր մերձարևադարձային գոտու առաջավորասիական կիսաանապատային-տափաստանային լանդշաֆտային տիպի մեջ: Ուստի պատահական չէ, որ բնատարածքի վերընթաց գոտիականության հորինվածքի ստորին հարկը ներկայացված է կիսաանապատ-անապատային քսերոֆիլ կենսաձևերով: Վերջիններիս հաջորդում են Հայկական բարձրավանդակին հատուկ՝ գրեթե բոլոր վերընթաց գոտիների կենսահամակեցությունները:

ՀՀ հարուստ կենսաբազմազանությունը կենսական նշանակություն ունեցող ռեսուրս է, ազգային հարստություն և պահանջում է խնայողաբար վերաբերմունք: Բնական միջավայրի վրա անթրոպոգեն ներգերծությունը առաջ է բերել էկոլոգիական լարվածության բազմաթիվ գործոններ, որոնց արդյունքում խախտվել է ՀՀ բնալանդշաֆտային միջավայրի առանձին բաղադրիչների և ողջ համալիրի ֆունկցիոնալ էկոլոգիական հավասարակշռված վիճակը: Նման պայմաններում առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում բնատարածքային համալիրների արդյունավետ օգտագործման բարելավման ու էկոլոգիական հավասարակշռության պահպանման գոտիականորեն հիմնավորված ուղիների ու ձևերի մշակման անհրաժեշտությունը:

Կենսաբազմազանության վրա բացասական ներգործության արդյունքում բնապահպանության և կենսառեսուրսների կայուն օգտագործման ոլորտներում առաջ են եկել մի շարք հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրներ: Տարիների ընթացքում պետության կողմից իրականացվել են այս բնագավառի օրենսդրության կատարելագործման, գիտակիրառական և կազմակերպչական տարբեր միջոցառումներ նշված բացասական ներգործությունները մեղմելու կամ կանխարգելելու համար: Մակայն այդ մասնակի քայլերը ցանկալի լուծում չեն

տվել ոլորտում առկա հիմնախնդիրներին: Այդ հիմնախնդիրների լուծման առաջնահերթ ուղղությունները ներկայացված են ՀՀ կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրում, որտեղ հատկապես կարևորվում է բնության հատուկ պահպանվող տարածքների, մասնավորապես պետական արգելոցների, արգելավայրերի և ազգային պարկերի դերն ու նշանակությունը բնական էկոհամակարգերի, դրանց կենսաբանական և լանդշաֆտա-էկոլոգիական բազմազանության պահպանության գործում: ԲՀՊՏ-ների կազմակերպումն ու զարգացումը համարվում է կենսաբազմազանության պահպանության ամենահուսալի եղանակը: Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի մշակումը ՀՀ բնապահպանական քաղաքականության կարևորագույն խնդիրներից է՝ ուղղված « Կենսաբազմազանության մասին » կոնվենցիայի դրույթներով իրականացմանը:

Համաձայն « Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին » ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տարածքները ցամաքի և համապատասխան օդային ավազանի՝ օրենքով առանձնացված տարածքներն ու առանձին բնական օբյեկտներն են, որոնք բնապահպանական, գիտական, կրթական, առողջարարական պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ: ԲՀՊՏ-ները ապահովում են հազվագյուտ անհետացման եզրին գտնվող էնդեմ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում: Դրանք երկրի հարուստ կենսաբազմազանությունից բացի կոչված են պահպանելու առանձնահատուկ նշանակության լանդշաֆտները, եզակի էկոհամակարգերը կամ դրանց առանձին բաղադրիչները, ինչպես նաև իրականացնելու էկոհամակարգերի և բուսակենդանական առանձին տեսակների մոնիթորինգ:

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի դրույթներին համաձայն կենսաբազմազանության պահպանման և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրների լուծումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա:

1. Կենսաբազմազանությունը ՀՀ առանձնահատուկ հատկանիշներից մեկն է և պետության ու ազգաբնակչության գոյության և կենսագործունեության առաջնային երաշխիքը,

2. Լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությունը մեր հանրապետության ազգային հարստությունն է և համաժողովրդական սեփականությունը,

3. Պետությունն ապահովում է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանությունը, կայուն օգտագործումն ու վերարտադրությունը, կենսաանվտանգությունը, միջազգային համաձայնագրերով սահմանված այլ պարտավորությունների կատարումը,

4. Բնության հատուկ պահպանվող տարածքները լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանությանը և կայուն օգտագործման ապահովման միջոց է ուղղված մարդու կենսագոյության, շրջակա միջավայրի և երկրի սոցիալ-տնտեսական բնականոն ու կայուն զարգացման ապահովման,

5. ԲՀՊՏ-ները դիտարկվում են որպես բնական լանդշաֆտների և էկոհամակարգերի վիճակի գնահատման և մոնիթորինգի տարածքային հենակետեր,

6. ԲՀՊՏ-ները համարվում են էտալոնային չափանիշներ բնական լանդշաֆտների ու դրանց էկոհամակարգերի անթրոպոգեն փոփոխությունների գնահատման համար,

7. Կենսաբազմազանության ցանկացած տարր հանդիսանում է ամբողջական համակարգի գոյության նախապայմանը,

8. ՀՀ կենսաբազմազանության պահպանման խնդիրները դիտարկվում են տարածաշրջանային և համամոլորակային հիմնախնդիրների համատեքստում,

9. ԲՀՊՏ-ների բարելավումը և համակարգի զարգացումը իրականացվում է հաշվի առնելով.

ա/ կենսաբազմազանության բաղադրիչների պահպանության և օգտագործման էկոհամակարգերին մոտեցման սկզբունքները,

բ/ տարածքի սահմանազատման գետավազանային սկզբունքները,

գ/ լանդշաֆտների ու դրանց բաղադրամասերի վերընթաց գոտիական բաշխվածության աշխարհագրական օրինաչափությունը:

ՀՀ կենսաբանական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կենսաաշխարհագրական բազմազանության պահպանման հիմնախնդիրների լուծումը ենթադրում է բնօգտագործման գիտականորեն հիմնավորված ձևերի ու բնապահպանական միջոցառումների այնպիսի տարբերակների մշակում, որոնք կապահովեն բնական էկոհամակարգերի և տեխնոժին գեոհամակարգերի ներդաշնակ տարածքային հարաբերակցությունը: Դա է պահանջում « բևեռացված կենսոլորտի » սկզբունքը, որն այսօր ժամանակի հրամայականն է:



## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

/ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ /

Տեսակների բազմազանության պահպանումը կարելի է իրականացնել միայն այն դեպքում, եթե տարբեր երկրների քաղաքացիները, կառավարությունները պատրաստակամություն ցուցաբերեն անհրաժեշտ միջոցառումները իրականացնելու համար:

Բնական համակարգերի կայունացման առաջին նախապայմանը կարող է լինել՝

© բնակչության թվաքանակի կայունացումը,

© աղքատության և սոցիալական անարդարության խնդիրների ավելի արդյունավետ լուծումը:

Ինչպես հայտնի է աղքատությունը մարդկանց հաճախ ստիպում է անխնա շահագործել բնական հարստությունները:

Իսկ սոցիալական անարդարությունը գոյություն ունի ցանկացած երկրի ներսում և տարբեր երկրների միջև: Բնական հարստությունների 4/5-ը սպառում են տնտեսապես զարգացած երկրները, որոնց բնակչությունը կազմում է մոլորակի բնակչության 20 տոկոսից էլ պակասը, և այդ հակասությունը գնալով խորանում է: Հատկանշական է, որ հարուստ երկրները, որոնք խնայում են իրենց բնական հարստությունները կամ սպառել են դրանց մեծ մասը, աղքատ երկրներից արտահանում են հազվագյուտ բուսատեսակներ, փայտանյութի արժեքավոր տեսակներ, կենդանիների մորթիներ, փղոսկր և այլն: Մի կողմից աղքատ երկրները ստիպված են շահագործել մոլորակի կենսապաշարները, մյուս կողմից հարուստները այն շռայլում են առանց դրա կենսական անհրաժեշտության:

Կենսաբազմազանության պահպանման համար միջազգային կազմակերպություններն առաջարկում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ պահպանել ներկայումս գոյություն ունեցող յուրաքանչյուր բուսատեսակներից որոշակի թվով առանձնյակներ: Դրա համար ենթադրվում է ստեղծել պահպանվող գոտիների համաշխարհային համակարգ, մասնավորապես, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մարդը և կենսոլորտը» ծրագրերի շրջանակներում: Այդպիսի գոտիների ընտրությունը պետք է իրականացվի խիստ հետևողականորեն, որպեսզի հնարավորինս ապահովվի երկրի վրա գոյություն ունեցող կենսաբանական տեսակների ներկայացուցչականությունը: Այդ աշխատանքը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները, մարդկային տնտեսական գործունեության առկա բոլոր տեսակները, քանի որ ակնհայտ է, որ Երկրի վրա էկոհամակարգերի պահպանումն իրենց նախնական կուսական վիճակում հնարավոր չէ:

Քանի որ քիչ թե շատ պահպանված էկոհամակարգերը ներկայումս գտնվում են զարգացող երկրներում, կենսաբազմազանության պահպանումը հնարավոր է միայն զարգացող բոլոր երկրների մասնակցությամբ, ընդ որում զարգացած երկրների զգալի ֆինանսական օժանդակությամբ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելանիա Դավթյան -- ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ
2. Մ. Գալստյան, Ա. Մկրտչյան, Ս. Թամոյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
4. ԱԶԱՏ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

